

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐՐԱՅԱԿԱՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ԿԱՐԱՊԵՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Հայոց լեզուն իր կազմավորման օրից աղերսվել է բազմաթիվ հին լեզուների հետ և այդ բոլոր մեռած ու կենդանի լեզուների հետքերը պահպանել է հազարամյակների ընթացքում: Այդ հետքերի ուսումնասիրությունը հույժ կարևոր է ոչ միայն հայոց լեզվի պատմության տեսակետից, այլև առատ նյութ կարող է տալ մշակույթի պատմության, հին ժողովուրդների ու ցեղերի հետ ունեցած հարաբերությունների և առնչությունների վերաբերյալ:

Այսօրինակ ուսումնասիրություններ տարաբախտաբար սակավ են մեր բանասիրական և պատմական գրականության մեջ: Մեր բանագետներն առավելապես զբաղվել են պատմական իրողությունների քննությամբ և մեկնաբանությամբ, իսկ լեզվաբանության բնագավառում մինչև անցյալ դարի վերջերը գրեթե ոչ մի լուրջ ուսումնասիրություն չկա, եղածներն էլ նվիրված են քերականության և ծարտասանության հարցերին: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ մեր իրականության մեջ չեն եղել գիտական (եվրոպական մտքով) հաստատություններ, իսկ վանական դպրոցները միայն գրագիտություն են սովորեցրել ու կրոնի սպասավորներ պատրաստել: Երջանիկ բացառություն են կազմում այս հարցում Վենետիկի Մխիթարյան միաբանության վարդապետները, որոնք հսկայական ավանդ ունեն հայ գիտության և մշակույթի պատմության մեջ:

Մխիթարյան ուխտի մեծանուն գիտնականները ջանասիրությամբ ուսումնասիրում էին բազմաթիվ հին ու նոր լեզուներ, որոնց օգնությամբ (համեմատական լեզվաբանության եվրոպական մակարդակով) բացահայտում էին հայագիտության բազում գաղտնիքներ, որ մուտք էին մտնում մինչև 19-րդ դարը: Մխիթարյան լեզվաբանները՝ քաջ տիրապետելով եբրայերեն լեզվին՝ ծջգրտել են Աստվածաշնչում եղած բառերի հին ստուգաբանությունները, կազմել են ս. Գրքի առաջին համաբարբառը: Եբրայերենի և հայերենի հնագույն առնչությունները, սակայն, միայն կրոնական գրքերի մեջ չպետք է որոնել. պետք է պեղել նաև հայ բազմաթիվ բարբառների բառազանձը՝ ժողովրդի կենդանի լեզուն, որ առատ է եբրայերեն բառերով: Հայերի և հրեաների փոխհարաբերությունների մասին գրավոր տեղեկություններ մեզ չեն հասել հին, հեթանոսական դարերից, թեև մեր պատմությունը հիշատակում է, որ Հայաստանի քաղաքներում մեծ թվով հրեաներ էին ապրում տակավին մեր թվականությունից առաջ: Ահա այդ երկարամյա համատեղ կյանքի արդյունքն է մեր բարբառներում և մատենագրության մեջ մուտք գործած եբրայական տարրը: Գրական ծանապարհով եկած եբրայերեն բառերն արտասանվել են և գրվել հունական տառադարձությամբ, իսկ բարբառների միջոցով մեզ հասած եբրայերեն բառերի մեծ մասը պահպանել է հին եբրայերենի արտասանությունը (թեև հաճախ խիստ աղավաղված): Ջրիստոնեական կրոնի առաջին քարոզիչները Հայաստանում եղել են ասորի և հույն կրոնավորները, ուստի կրոնական գրքերի (հատկապես Աստվածաշնչի) միջոցով մեր լեզվին անցած եբրայական բառերի տառադարձությունը պահպանվել է հունական ձևով, իսկ եբր հայերը Ե դարում առեղծեցին իրենց սեփական գիրը՝ եկեղեցական գրքերի հայ թարգմանիչները ս. Գրքի շատ բառեր (եբրայերեն) պահպանել են արդեն սովորական դարձած (հունական և ասորական) արտասանությամբ: Այս հանգամանքը առիթ է տվել շատերին կարծելու, թե ս. Գիրքը թարգմանված է հունարենից և ոչ՝ եբրայերենից: Այս կարծիքը հիմնավորում են նրանով, որ հայերեն թարգմանությունները չեն պահպանել եբրայերենի Ծ և Ց բաղաձայնները, քանզի հունարենը դրանք չունի, և դրանց փոխարեն գործ է ածում Ս: Սակայն եբրայական շատ բառերի մեջ վերոհիշյալ Ծ և Ց հնչյունները պահպանվել են (չաբաթ, Եղիշէ):

Մեր մատենագրության մեջ միշտ հունարենին են տալիս գերապատվությունը, իսկ եբ-

\* 7 դեկտեմբերի 1988 թ.: Ռաժան երկրաշարժի զոհ դարձավ նաև այս հոդվածի հեղինակը՝ լենինականցի լեզվաբան Կ. Դուրգարյանը:

իայերենը կամ անուշադրության են մատնում, կամ նսեմացնում են, քանզի գրեթե բոլոր մատենագիրները կրոնավորներ են և, եթե շատենք թշնամական, գոնե արհամարհական վերաբերմունք ունեն հրեաների նկատմամբ: Այստեղից էլ հնարել են մեր թարգմանիչների «կարծեցյալ եբրայագիտությունը» (Ե. Դուրյան): Սակայն մինչև քրիստոնեության մուտքը Հայաստան, հարյուրավոր տարիներ հայերն ու հրեաները ապրել են կողք-կողքի՝ հայոց մայրաքաղաքներում, միասին տարածել են արհեստներն ու անտուրը, հաղորդակից են եղել միմյանց կենցաղավարությանն ու սովորություններին և աչք: Մի՞թե հայերը կարող էին անտարբեր մնալ հրեից գրի ու գրականության նկատմամբ, որ ավելի քան հազարամյա հնություն ուներ և հայտնի էր ողջ աշխարհին իր Հին կտակարանով: Մեր թարգմանիչները քաջ ծանոթ են եղել եբրայերեն լեզվին և հայերեն թարգմանելիս օգտվել են բնագրից՝ հարազատ մնալով ս. Գրքի ոճին: Նույնիսկ վերնագիրը (Բիբլիա) փոխել են Աստվածաշունչ, թեև շատ ազգեր պահել են Բիբլիան, որ գիրք է նշանակում (այստեղից՝ բիբլիոսեկ, բիբլիոգրաֆիա և այլն): Այս բոլորը վկայում են, որ եբրայերենի և հայերենի աղերսները հայոց լեզվի պատմության մեջ կամ չեն քննվել և կամ դրանց մասին խոսել են հպանցիկ՝ ամեն կերպ ջանալով ցույց տալ, թե հայերենը եբրայերենի ուղղակի ազդեցությունը չի կրել: Մինչդեռ այդ ազդեցությունը եղել է նաև հեթանոսական Հայաստանում և թողել է իր հետքերը ժողովրդի լեզվի մեջ:

Հայոց լեզվի պատմության ձեռնարկներում էլ գրեթե ոչինչ չի ասված եբրայական փոխառությունների մասին: Մեր օրերում հայոց լեզվի պատմության առաջին տպագիր աշխատության հեղինակ Արարատ Ղարիբյան իր «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» գրքում (1938) բոլորովին չի խոսում եբրայական փոխառությունների մասին, թեև պարսկերենի, հունարենի և այլ փոխառություններին բավական էշեր է նվիրել:

Ընդամենը երկու տարի անց (1940) հրապարակ եկավ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության Ա մասը, որտեղ հանգամանորեն քննության է առնվում դասական հայերենի փոխառությունները հին լեզուներից (պարսկերեն, հունարեն, ասորերեն և այլն): Այս գրքում ևս եբրայերենի մասին խոսք չկա, թեև ավելի ուշ ազդեցությունների և փոխառությունների մասին բավական խոսում է հեղինակը: Միայն ավելի քան մեկ տասնամյակ հետո լույս տեսած՝ վերոհիշյալ աշխատության Բ մասում մի քանի էջ տրամադրել է այդ խնդրին՝ «Եբրայական փոխառությունները հայերենում» խորագրով:

Վերնագրից անմիջապես հետո կարդում ենք. «Հայերը և եբրայացիք ուրիշ հարաբերություն չեն ունեցել իրար հետ, եթե ոչ իբր տիրող և նվաճյալ (ընդգծումը մերն է—Կ. Դ.): Առաջին անգամ Տիգրան մեծը, երբ նվաճեց Պաղեստինը, բազմաթիվ հրեա գերիներ բերավ բնակեցրեց Հայաստանի զանազան քաղաքներում: Նրանք շատ հանգիստ ապրում էին Հայաստանում, աճում ու բազմանում երկրի բոլոր մեծ քաղաքներում, ուր թվով նույնիսկ գերազանցում էին հայերին»:

Ուրեմն, դուրս է գալիս, որ մեր քաղաքներում հրեաները հայերից շատ էին, ապրում էին հանգիստ (ոչ տարուկի իրավունքով), տարածում էին արհեստները, վարում էին անտուրը... Էլ ո՞ր մնաց տիրողի և նվաճյալի փոխհարաբերությունը: Մի՞թե հայ վաճառականները, որ հրեա գործընկերների հետ շրջում էին հեռավոր առևտրական կենտրոններում, հենց գործի թելադրանքով չէին օգտվում գոնե հրեական գրից՝ առևտրական իրենց առօրյա հաշիվներն անելիս: Սակայն այնպես է ստացվում, որ իբր հրեաները մոռացել են իրենց լեզուն, և, հետևյալբար, հայերը ոչինչ չէին կարող փոխ առնել նրանցից: Ահա ինչ է գրում ակադեմիկոս Աճառյանը. «Ընդհանրապես գիտենք, որ հրեաները ուր որ հաստատվել են, շուտով կորցրել են իրենց լեզուն և ընդունել տեղական լեզուն: Այդպես պետք է լիներ նաև Հայաստանում» (էջ 54):

Արդյո՞ք այդպես եղել է (որ չգիտես ինչու, պետք է լիներ), չէ՞ որ եբրայերենը հազարամյակների ընթացքում պահպանվել է իբրև Բիբլիայի լեզու, նույնիսկ շատ կուլտուրական երկրների համապարաններում դասավանդվել է, ուսումնասիրվել... Բայց հետևենք հեղինակի մտքերին. «Պատմությունից գիտենք, որ հրեաները Բաբելոնում գերության ժամանակ կորցրին եբրայերենը և երբ վերադարձան Երուսաղեմ, արդեն արամեայտու էին: Ուրեմն Տիգրանի բերած գերիներն էլ խոսելիս պիտի լինեին (') արամերեն, որ նույն է ասորերեն (ընդգծումը մերն է—Կ. Դ.): Ասորերենը արդեն Հայաստանում խոսված լեզու էր ("): Հրեաները անշուշտ իրենց կրոնական հաստատությանց մեջ պահած էին եբրայեցիները, ինչպես մինչև այսօր էլ զանազան երկրներում, բայց դրանով չպիտի կարողանային որևէ ազդեցություն գործել հայերենի վրա: Այսպիսով եբրայեցիների ուղղակի ազդեցությունը հայերենի վրա՝ ամբողջապես վերանում է» (էջ 55):

Միանգամայն ավելորդ ենք համարում բանավիճել, թե ասորերենը Հայաստանում խոսակցական լեզու է եղել երբևէ, կամ Հայաստանի հրեաները խոսել են ասորերեն և այլն. սակայն

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ մաս, Եր., 1951, էջ 54—65.

չենք կարող չնկատել, որ հրեական շատ բաներ ու անձնանուններ (նույնիսկ տեղանուններ) մեր լեզվում պահպանվում են անհիշելի ժամանակներից: Մի՞թե մեր եկեղեցու հայերը չէին կրում եբրայերեն անուններ (հենց Սահակ (Իսահակ) կաթողիկոսը) և չէին հասկանում դժբանք իմփատը: Երևի այսպիսի անհերքելի հարցերն ու փաստերն են ստիպել գիտնականին խոստովանելու նաև եբրայերենի «շատ մեծ ազդեցությունը» աշխարհիս մեծագույն մասի վրա:

«Բայց եբրայացիք, ինչքան էլ փոքրիկ ու աննշան մի ժողովուրդ, որ քաղաքական ոչ մի սեծոփություն չկազմեցին և որևէ ազդեցություն չունեցան ուրիշ ժողովուրդների վրա, այնուամենայնիվ գրական ու կրոնական տեսակետով շատ մեծ ազդեցություն ունեցան աշխարհիս սեծագույն մասի վրա: Հին կտակարանը իբրև սրբազան մատյան ընդունվելով նախ քրիստոնեության, ապա և մահմեդականության մեջ, թարգմանվեց ամեն լեզվի և բազմաթիվ եբրայեցերեն բաներ նրա միջոցով մուտք գործեցին բոլոր քրիստոնյա, մասամբ նաև մահմեդական ազգերի լեզուների մեջ: ԱՄԵՆ բառը համաշխարհային մի բառ է», — գրում է նույն Աճառյանը (էջ 55):

Հիշյալ գրքում եբրայերեն բաների և առհասարակ եբրայերենի ըննությունը չկա, բավարարվել է միայն իր արմատական բառարանից քաղած մի բառացանկով, որ պարունակում է ընդամենը 133 եբրայերեն բառ: Հիշատակում է նաև 98 եբրայական անձնանուն, որ հանված է Աստվածաշնչից և այլ մատյաններից: Այդ բառացանկերի այբբենական կարգով դասավորված բաները համառոտակի (մեկ բառով) բացատրվում են, իսկ անձնանունները չեն բացատրվում: Հարկավ այդ բառացանկերը շատ հեռու են հրեից բաների ամբողջական քանակն արտահայտելուց. հաշվի չեն առնված միջնադարյան մատյաններում և ժողովրդական բարբառներում առկա փոխառությունները, որ մի քանի անգամ շատ են:

Հայերեն բարբառներում պահպանված եբրայերեն բաներն ավելի մոտ են հին արտասանությանը, քան գրական ծանապարհով եկած փոխառությունները: Սրանք զգալիորեն արտահայտում են ոչ կրոնական իմաստ (կենցաղ, առտնին իրեր, գործիքներ, տեղանուններ, անձնանուններ, ամսանուններ և այլն): Օրինակ Խուլփեցոց բարբառում ամիսների անունները պահպանվել են եբրայերենով, սրանք հարկավ անցել են համակեցությունից՝ անհիշելի ժամանակներում: Իհարկե ժողովրդի գործածած շատ եբրայերեն բաները ժամանակի ընթացքում աղավաղվել են, դարձել հաճախ անհասկանալի, բայց դրանց զգալի մասը մինչև օրս պահպանել է իր իմաստն ու նշանակությունը և գործածվում է հին բարբառներում: Այս բաների բացատրությունները հանդիպում են միջնադարյան հայ մատյաններում, որ կան մեր Մատենադարանում: Այսպես ԺԳ դարի մի ձեռագրում (№ 5596, էջ 202) «Բառք եբրայացվոց» վերնագրի տակ տեղ են գտել ավելի քան չորս հարյուր եբրայական բաներ, որ քաղված են ժամանակի գրավոր աղբյուրներից և այբբենական կարգով շարված՝ համառոտ բացատրություններով: Սրանց շատերը չեն պահպանում եբրայական տառադարձությունը, հնչյունափոխված են հունարենի և այլ լեզուների ազդեցությամբ (ասենք՝ սիլա > սիլա — հուպս, Սիմեոն > Յեմավոն — լսող): Տարբաբխտաբար այդ եբրայական բաները գրված են միայն հայերեն տառերով, հաճախ սխալներով, որ դժվարացնում է ուսումնասիրողին, մանավանդ, եթե վերջինս լավ չգիտե հին եբրայերենը:

Վերոհիշյալ ձեռագրում գտնվող 421 բաներից 9-ը եբրայերեն չեն, մնացածների մեծ մասն էլ գրությամբ հեռացել են բուն արմատից. սակայն բացատրությունները ճիշտ են, համոզիչ: Ահա այդ բաներից մի քանիսը (այբբենական կարգով), որ չեն մտել արմատական բառարանի մեջ, ոչ էլ՝ «Հայոց լեզվի պատմության»:

Աբամելիք — արքայաիայր	Բահաղ — պատրիչ
Աբիդան — ծառայութիւն	Բաղամ — սնտոխ
Աբբա — հայր	Բեռէլ — տուն աստուծոյ
Աբբանա — հար օրինութիւն	Բեթլեհեմ (բեռլեհեմ) — տուն հացի
Աբելբի — փութապէս	Բեթսամիս — տուն արեգական
Ադգա — հայելի	Բեթսաիդ — տուն ողորմութեան
Ադին — փափկութիւն	Բստակ — փայլակն
Ադոնիա — տերանց տեր	Գաբաթոն — բարձրացեալ
Ադրագար — գեղեցկավայելչութիւն	Գաբաոն — բլուր առեալ
Ամատ — տարա, նշակ կ. դաշտ, փոս	Գաթեր — պաւտրփաւն գերմամբ
Ամեսեայ — ժողովուրդ հպարտացեալ	Գարգաթ — փորձութիւն կ. լուրվումս
Ամոփս — հաստատութիւն	Գազա — ոյժ կ. զարութիւն
Ալենոն — աղբիւր զօրութեան	Գաղա — կենդանի կ. խօսուն
Անայլէ — լումն աստուծոյ	Դաբիրա — գլուխ կ. դրաւշած կ. սրբութի սրբոց
Բաբելոն — փոփոխումն, խռովութիւն. խառնակք	Դագոն — զարութիւն
Բազոն — փոփոխումն	Դալլա — աղքատ

Դասան—կոխեալ  
 Դեքաս—մեղուանոց  
 Դեոն—արկղ  
 Դեսան—կալուած  
 Դոպել—տատանումն կ. շարժումն  
 Դումա—նմանութիւն  
 Եբեր—եբրայեցիք  
 Եգար—վեմ, քար, ապառաժ  
 Եդեմ—երկիր փափկութեան  
 Եզեկիա—իշխանութիւն  
 Եթոպիա—խոնարհութիւն  
 Ելովէ—աստված (եհովա)  
 Ելոն—բարձեալ  
 Եմերոն—խորհուրդ  
 Եսամնովթ—հաւատ  
 Եփար—ամալթ, ամթ  
 Եփեր—բարեկամ  
 Եփրատես—սփոռան ի ստղաբերութիւն  
 Եփրովն—հող  
 Զարդոն—հասումն գիշերով կ. մերձումն  
 Զարէ—լաղթող  
 Զեբ—գաղ. խաւար  
 Զոմ զոմա—այս ճուրս  
 Զուբա—սուր  
 Զուրա—ոմկի  
 Էգ—ստղաբեր  
 Էլ—Աստուած  
 Էմուն—ջերմութիւն  
 Էր—մարդ  
 Էրրա—արթնութիւն  
 Թորել—լաւերուած  
 Թարգազա—գոտութիւն ելից  
 Թետան—հաճութիւն  
 Թարսիս—լրտեսութիւն  
 Թերաս—գոտութիւն  
 Թերակա—ավելորդ  
 Թես—երկիւղ  
 Թեէքամանի—իմաստութիւն  
 Իսթար—այր բարերար  
 Կարեմովթ—հեղեղատ  
 Կաղաթա—եկեղեցիք  
 Կաթթարա—սուրբ  
 Կեդրոն—մխիթարութիւն

Կղեմ—նուղղութիւն  
 Կիրիէն—ժառանգաւոր  
 Կուե—գլխավոր  
 Հոափայել—բժշկութիւն Աստուծոյ  
 Հոոթ—շունչ  
 Հոեուսա—գոտութիւն  
 Ղաթիմ—Յնեալք  
 Ղամեք—տառապանք  
 Մաղաքիս—հրեշտակ  
 Մազարովթ—փակումն  
 Ման—զինչ  
 Մանթա—տուրք  
 Մատրեդ—հալածանք  
 Մակուովթ—խորտակումն  
 Մարապա—սպանութիւն  
 Յետաբաթա—մեծամիտ  
 Յոպպե—գեղեցկութիւն  
 Յովսա—լապահումն  
 Նադամ—հաճութիւն  
 Նակամ—անպարտութիւն  
 Նամեստ—շոշոփումն  
 Նաուում—մխիթարութիւն  
 Նու—հանգիստ  
 Նուաթ—հնութիւն  
 Նուեմոն—քաղցր  
 Պասեկ—փրկութիւն  
 Պերթե—բանասրկու  
 Պոթուր—սեղան  
 Ռաթել—ոչխար կ. շունչ հզար  
 Ռահաբ—լոյս կ. ընդարձակութիւն  
 Ռեքմա—որոտումն  
 Սաղեմ—հատուցումն  
 Սեմ—հանգիստ, կատարեալ  
 Սիմեոն—Շմեոն—Շմավոն—լսող  
 Սիմ—կոթող  
 Սիղա—լոյս. (սիլա, սիլսիլա—բարբառում)  
 Տարթթա—այծեմնիկ  
 Տարափ—բարկութիւն  
 Տիգրիս—արութիւն, լայնութիւն, ցասկոտ  
 Տոփ—բարդ  
 Տարոս—լուծութիւն  
 Տորեփ—ցամաքութիւն

Եբրայերենից հայերենին և անցել անձնանունների և տեղանունների մի մեծ քանակություն (շուրջ 250 բառ), որոնց զգալի մասը եկել է կենդանի լեզվից և չկա Աստվածաշնչի մեջ:

Առավել հետաքրքրական է եբրայական գրերի (տառերի) անունները, որ նկատելի է մեր այրութենի մեջ: Սակայն Մաշտոցն այդ անունները կրծատել է, դարձրել միավանկ, որի հետեվանքով տառերի անվան նշանակությունը մոռացվել է. այժմ այդ անունները հնչում են որպես անիմաստ բառեր: Այսպես՝ Գ տառը, որի անունն է գիմել նշանակում է «ժուկ», դալթ Պ տառի անունն է, որ դարձրել է ՊԱ, բեթ Բ տառի անունն է, որ դարձրել է ԲԵՆ նշանակում է «տուն». խեթ նշանակում է «կենդանություն» դարձրել է խե. մեմ նշանակում է «ի սմանե», դարձրել է ՄԵՆ. Նուն նշ. «հավիտյան»—դարձրել է ՆՈՒ, թեյ նշանակում է «երևելի»—դարձրել է ԲԵ, ցողիկ կամ ցողե Յ տառի անունն է, որ դարձրել է ՅՈՒ և այլն: Եթե մեր պատմաբանների կամ լեզվաբանների պնդումներին հավատանք, թե հայոց այրութենը հունարենի հետևողությամբ է կազմվել, ապա բնական հարց է ծագում՝ ինչո՞ւ ԳԻՄ և անվանվել մեր երրորդ տառը և ոչ՝ ՊԱՄԱՄ, ինչո՞ւ հաջորդը ՊԱ է, ոչ՝ ՊԵ (դեւտա), ինչու Յ տառը (որ հունարենը չունի) կոչվել է ՅՈՒ և ոչ՝ ՅԵ (ինչպես լատիներենում և շատ լեզուներում) և այլն: Գիտնականներից ոմանք (ի թիվս որոց և ակադեմիկոս Հր. Աձառյանը) նշում են, որ մեր գրերի անունները մեծ մասամբ սեմանան են, բայց տառերի հաջորդականությունը հետևած է հունարենին:

Բանն այն է, որ գրեթե հաջորդականությունը հույները վերցրել են փյունիկներինց և եգիպտացիներինց. քանակն էլ եղել է նույնը՝ 22 գիր. բայց քանի որ հունարեն ձայնավորներից երկուսը՝ Ե և Օ (o) օմիկրոն ունեն նաև երկար տևողությամբ միևնույն հնչյուններ՝ էպսիլոն և օմեգա, ուստի հունաց ալֆաբեթը աճել է վերոհիշյալ երկու կրկնակի գրերով և դարձել 24 գիր: Աշխարհում բոլոր հին այբուբենների սկիզբը նման է: Գոնե առաջին գրերը միմյանց հաջորդում են գրեթե նույնությամբ: Միայն անուններն են տարբեր—հայերեն՝ այբ, բեն, գիմ, դա, եբրայերեն՝ ալիֆ, բեյթ, գիմել, դալեթ, հունարեն՝ ալֆա, բեթա, գամմա, դելտա և այլն: Այդպես էլ պետք է դասավորված լինեին և նույնքան հնչյուններ ունենային, որքան հին եբրայերենն ուներ, այսպես կոչված «դանիելյան» նշանագրերը, որոնց հիման վրա ստեղծվել է հայոց գիրը:

Մեր պատմիչները հայոց գրերի ստեղծումը բացատարում են հրաշապատում ձևով: Թե Կորյունը և թե մանավանդ Մովսես Խորենացին հիշատակում են, թե իբր Մեսրոպն իրեն տվեց աղոթքի, և տեսիլքի ձևով երևաց նրան աստվածային աջը, որ գրեց պատի վրա հայկական նշանագրերը: Սակայն նույն պատմիչները վկայում են, որ հայոց նշանագրերը բերվել են Միջագետքից, ասորի մի եպիսկոպոսի մոտից (Դանիել անունով) և տվել են Սահակին ու Մեսրոպին՝ գործածելու: Այդ նշանագրերով սովորեցրել են հայ մանուկներին մի երկու տարի, որի ընթացքում պարզել են, որ այդ գրերը լիովին չեն համապատասխանում հայերենի հնչյուններին: Այնուհետև մտածել են մեր լեզվին լիարժեք, հնչյուններին համապատասխանող նշանագրեր (տառեր) ստեղծել: Սույն Դանիելյան նշանագրերի մասին խոսում են Կորյունը, Խորենացին, Փարպեցին, Վարդան Բարձրաբերդցին և այլք: Ուրեմն՝ հաստատ փաստ է, որ Մեսրոպը, նախքան հայոց այբուբենի ստեղծելը, գործ է ածել Դանիելյան նշանագրերը: Միաժամանակ վերոհիշյալ նշանագրերը հիմք են դարձել մեր նոր այբուբենի:

Ի՞նչ նշանագրեր էին «դանիելյան» կոչված գրերը. իրանձ հայկական էին դրանք, թե՞ որևէ օտար լեզվի ծնունդ. օգտագործված են եղել նրանք հնում երբևէ (քանի որ Կորյունը կոչում է «ուրիշ դպրություններից թաղված ու հարություն առած գրեր»), որքան է եղել այդ գրերի քանակն ու ի՞նչ դասավորություն են ունեցել նրանք: Ահա հարցեր, որոնցով զբաղվել են տարիներ շարունակ հայ և այլազգի բանասերները:

Հայ պատմիչները միաբերան վկայում են, որ Կոնստանդնուպոլսի թագավորի օրոք բերվել են Դանիելյան նշանագրերը, որոնք թերի են եղել, հետագայում լրացվել են և կատարելագործվել: Սակայն ոչ մի տեղեկություն չեն հաղորդում այն մասին, թե այդ նշանագրերը Դանիել ասորին է հնարել, կամ որտեղից՝ և ձեռք բերել ասորի հոգևորականից:

Կորյունը որոշակի ոչինչ չի ասում այդ նշանագրերի ետլթյան, ծագման, քանակի և դասավորության վերաբերյալ: Սակայն պատմիչը վկայում է, որ այդ նշանագրերը ոչ միայն դրսից բերվել են, այլև օգտագործվել են «ամս երկու»: Միաժամանակ, Կորյունը հաղորդում է, որ Դանիելյան գրերը բավական չէին հայերեն լեզվի սիղոբանները՝ կապերը ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից «թաղված և հարություն առած հանդիպեցին»: Սա պարզ ու որոշակի ակնարկ է այն մասին, թե գրերը օտար ծագում են ունեցել: Ամենայն հավանականությամբ Դանիելյան նշանագրերը նման են եղել սեմական գրերին՝ թե՞ տառառեսակներով և թե՞ գրությամբ. աջից ձախ, ուստի Մեսրոպը մեկնել է Ասորիք և ոչ Հունաստան: Ըստ Կորյունի՝ Մեսրոպն իր նշանագրերը ստեղծել է Եդեսիայում, որից հետո եկել է Ամոնսատ քաղաքը և Հոռփանսու գրիչ օգնությամբ հարդարել ու ձևավորել է վերջնական այբուբենը: Սա միանգամայն հավատարի փաստ է: Մինչդեռ, ըստ Մովսես Խորենացու, Մեսրոպը Ամոնսատում է տեսնում «տեսիլքը» և այնտեղ է հորինում հայոց այբուբենը: Երկու պատմիչն էլ «աջի» պատմությունն անում են, որ ակնարկ է գրերի «աստվածային» շնորհ լինելու մասին: Կորյունը չի հիշատակում, թե ի՞նչ գրեր, ավելի ճիշտ, ո՞ր գրերը տեսավ Մաշտոցը՝ սուրբ աջով գրված: Խորենացին ևս այդ արժեքով ոչինչ չի ասում: Միայն մի քանի հրատարակություններում (որոշ ձեռագրերի հետ բաղդատելով) նշվում է, որ երևում է Մեսրոպին «աջ ձեռքի թաթ»՝ քարի վրա գրելիս Ա, Ե, Ը, Ը, Ի, Ո և Ի (այսինքն՝ ձայնավոր տառերը):

Խորենացու պատմության շատ օրինակների մեջ վերոհիշյալ ձայնավորների թվարկում չկա, և սա միանգամայն բնական է: Պատմահայրը նշում է, որ Մեսրոպն այդ տեսիլքից սթափվելով՝ ստեղծեց նոր նշանագրերը և ո՛չ ձայնավորները: Այդ յոթ տառն ավելացրել են, մեր կարծիքով, հետագա գրիչները, որոնք մտածել են, թե Մեսրոպը միայն յոթ ձայնավորներն է ստեղծել:

Ուզար Փարպեցին գրեթե նույն տեղեկություններն է տալիս Դանիելյան նշանագրերի մասին, ինչ որ Կորյունը և Խորենացին: Արանից էլ չենք կարող իմանալ՝ նշանագրերը Դանիելն է հորինել, թե՞ ձեռք է բերել ուրիշներից: Միայն «բարեպաշտ» և «սքանչելի եպիսկոպոսն Դանիել» արտահայտությունները վկայում են, որ պատմիչը գնահատում է Դանիելի մատուցած ծառայությունը:

Վերոհիշյալ երեք պատմիչներից հետո Դանիելյան նշանագրերի մասին խոսել են նաև

հետագա դարերի պատմագիրները, որոնք ոչ միայն հաստատում են առաջինների վկայությունները, այլև որոշակի խոսում են Նշանագրերի քանակի մասին: Դրանցից ուշադրության արժանի է Վարդան Բարձրաբերդցու վկայությունը, ուր պարզորոշ ասվում է, թե Դանիելյան 22 տառերին Մետրոպոլիտ ավելացրել է ևս 14 տառ և կազմել հայերեն այբուբենը. ...Սուրբն Մետրոպոլիտ յօրինէ դպրութիւն հայերէն. քսան և երկու գիր առ Դանիելի Ասորոյ գտեալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոցն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մետրոպոլիտ կարէր նոցօք փոխել զաստուածաշունչ մատենան ի հայ բարբառ: Վասն որոյ առօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տա նմա Աստուած զինդրելին, չորեքտասան գիրս, աշով իրով դրոշմեալ առաջի նորա...»<sup>2</sup>:

Ուրեմն 22 գիր է եղել Դանիելյան այբուբենը: Սակայն Վարդանը ևս պարզ ու որոշակի չի հիշատակում, թե ո՞ր տառերն են հնարվել Մետրոպոլիտ ձեռքով կամ ո՞րոնք են Դանիելյան Նշանագրերը: Թե որտեղից է վերցրել պատմիչն այս թիվը (22), անհայտ է, քանզի Նախորդ պատմիչներից ոչ մեկն ակնարկ չունի Նշանագրերի թվի վերաբերյալ: Մեզ թվում է, որ Վարդանն ի նկատի է ունեցել եբրայերենը կամ այլ սեմական լեզու, որ իրոք 22 գիր ունի: Մեր երկարամյա և բազմակողմանի քննությունն այս ուղղությամբ, մանավանդ հայերեն և եբրայերեն գրերի բաղդատությունն ըստ ձևի և ըստ դասավորության, մեզ բերել են այն համոզման, որ «դանիելյան» կոչված Նշանագրերը ոչ այլ ինչ են եղել, եթե ոչ եբրայերեն գրերը, որոնք կարող էին հնում գործածվելիս լինել Հայաստանում (Տիգրան Բ-ի օրով և Նույսիսկ ավելի վաղ):

Դանիելյան Նշանագրերի քանակի վերաբերյալ մյուս վկայությունը, որ գտնում ենք Ստեփանոս Տարոնացու (Ասողիկի) մոտ, միանգամայն անհավանական է: Համաձայն Ասողիկի վկայության, Դանիելյան Նշանագրերը 29 էին, որին Մետրոպոլիտ ավելացրել է յոթ գիր. «...Ի սորա (Թեոդոս փոքր) ատուրս էր սուրբ հայրապետն Հայոց Սահակ, յորոյ ատուրս դպրութիւն Հայոց լագուիս ԻԹ գիր ի Դանիելէ փիլիսոփայէ Ասորոյ կարգեցաւ, իսկ զեօթն գրոցն պակասութիւն Մետրովբ երանելի տարօնեցի խնդրուածովք, Աստուծոյ անուն»<sup>3</sup>:

Ընեց այս փաստն է, որ արտահայտություն է գտել Մովսես Խորենացու որոշ ձեռագրերում: Սա արդյունք է մեխանիկական հաշվումների՝ հիմնված այն սխալ կարծիքի վրա, թե Մետրոպոլիտը հնարել է միայն ծայնավորները և այդպիսով, իբր, կենդանություն տվել «Դանիելյան անշունչ գրերին»: Այս սկզբունքով էլ հայոց 36 տառերից մեքենաբար հանել են յոթ և ստացել այդ չարաբաստիկ թիվը՝ 29, որ ոչ մի հին լեզվի այբուբենին չի համընկնում:

Սակայն կարևոր է մեկ փաստ միայն՝ Դանիելյան Նշանագրերի պատմությունը լեզունը չէ, հաստատում են մեր բոլոր մատենագիրները, միայն թե ոչ մի պատմիչ ստույգ տեղեկություններ չի տալիս դրանց մասին: Սա է պատճառը, որ վերջին դարերի գիտնականներից ոմանք չեն հավատում Դանիելյան Նշանագրերի գոյության ճշմարտությանը, համարում են ասորիների հնարած լեզունը:

Ընդել Դանիելյան Նշանագրերի գոյությունը՝ անհնար է, քանզի բազում հիշատակություններ կան մեր պատմության մեջ: Գիտնականներից շատերն էլ լուրջամբ են անցել այս հարցի մոտով և հանգել այն եզրակացության, թե Մաշտոցը մեր այբուբենը ստեղծել է հունարենի հետևողությամբ, և, համեմատելով հայոց գրերը հունարենի հետ, ցույց են տվել, թե, իբր, Մետրոպոլիտը հորինել է հունարենում չեղած տառերը միայն: Մեծ մասամբ այս կարծիքը հիմնավորում են հայերեն և հունարեն տառերի հաջորդականության նմանությամբ: Սա շատ կասկածելի հիմք է, որովհետև իրենք՝ հույները իրենց այբուբենը վերցրել են եբրայերենից և փյունիկերենից: Սեմական լեզուների այբուբենը ևս Նույն դասավորությունն ունի. այդ դասավորությունը որոշ լեզուներում որոշ չափով խախտվում է ըստ տառերի քանակի (եբրայերենն ունի 22 տառ, հունարենը՝ 24, լատիներենը՝ 26, հայերենը՝ 36 և այլն): Տառերի անունները ևս նմանություն չունեն հունարենի հետ. ուրեմն՝ հայոց գրերի հունական ծագում ունենալու հանգամանքը քիչ է հավանական, չի հիմնավորվում համոզիչ փաստերով: Պետք է ենթադրել, որ Մաշտոցն իր այբուբենը ստեղծելիս օգտվել է Դանիելյան Նշանագրերից կամ իր ձեռքի տակ եղած որևէ հին գրերից (զույց եղած և մոռացված հայերեն):

Գարագաջյանն իր «Ջննական պատմություն հայոց» աշխատության մեջ ջննության առնելով հայոց գրերի առեղծման հարցը, գտնում է, որ հայերը մինչև Ե դարը ունեցել են Նշանագրեր: Նա հենվում է Փարպեցու «զոն Նշանագիրը հայերեն լեզույս» արտահայտության վրա: Բացի դրանից նա գրում է. «Անհնար էր լեզվին առանց դպրության հասնել այն աստիճան զարգացման, յորում կգտնվիս զևս ի հատակոտորս երգոց փոպասանաց» (հ. Դ, էջ 39):

Ընտաքըրբական է, որ Գարագաջյանն ակնարկում է, այնուամենայնիվ, հին այբուբենը:

<sup>2</sup> «Պատմութիւն Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ՝ 49:

<sup>3</sup> «Ատ. Տարօնացոյ Ասողական պատմ. տիեզերական», 1885, էջ՝ 139:

խոսելով խ-ի մասին, նշում է, որ հունարենում չկա կոկորդային այդ տառը, ուստի և մուծված է հին այբուբենից: Կնշանակի, ըստ Գարագաշյանի, հունարենից բացի Մետրոպի ձեռքի տակ եղել են նաև այլ այբուբեններ, որոնցից օգտվել է նա:

Ռանիելյան գրերին հունական ծագում է վերագրում նաև հայագետ Հյուբշմանը: Սա ևս համեմատում է հայոց այբուբենը հունարենի հետ և նշում, որ գրեթե նույն դասավորությունն ունեն:

Հակառակ վերոհիշյալ կարծիքների, որոշ գիտնականներ (Ֆր. Մյուլլեր, Նիկողայոս Սառ և այլք) հայոց գիրը համարում են սեմական ծագում ունեցող գիր, թեև չեն ժխտում հունարենի որոշ ազդեցությունը (հատկապես գրության ուղղությունը՝ ձախից աջ և տառերի դասավորության կարգը):

Ակադեմիկոս Հր. Աճառյանը մի շարք փաստերով հիմնավորում է, որ հայոց գիրը մեծ չափով առաջացել է հունական գրից (գրության ուղղությունը, անջատ գրվելը, ձայնավորների առկայությունը ևն): Հայկական գրերի անունները, ըստ Աճառյանի, փոխառված են հունականից և սեմականից, ուրեմն՝ Մետրոպն օգտվել է ժամանակի հայտնի լեզուներից, որ միանգամայն հավանական է և հաստատվում է համեմատությունների միջոցով:

Սակայն սխալվում են այն բանասերները, որոնք կարծում են, թե Ռանիելյան նշանագրերում բացակայել են ձայնավորները միայն: Առանց ձայնավորների գրություն լինել չի կարող: Եթե որոշ լեզուներում (եբրայերեն, արաբերեն և այլն) բառամիջում ձայնավորները չեն գրվում, չի նշանակում, որ այդ լեզուները ձայնավորներ չունեն. չէ՞ որ բառակազմում ձայնավորն անպայման գրվում է: Մեր հին լեզվում ևս գրիչները որոշ բառերում չեն գրում բառամիջի ձայնավորը. ասենք՝ սբ (սուրբ), բայց՝ ածծ (աստվածածին) — բառակազմի ձայնավորը գրվում է: Նույնիսկ այժմ էլ հայերնում բառամիջի Ը ձայնավորը չենք գրում (աստղ, կրակ, գրիչ, փոխ.՝ աստղը, կըրակ, զըրիչ): Նույն բանը կարելի է տեսնել և այլ լեզուներում: Ուրեմն ձայնավորների պակասը չէ, որ Ռանիելյան գրերը դարձնում էր անկատար, բացակայել են նաև մի շարք բաղաձայններ: Հարց է ծագում՝ եթե նշանագրերը պակաս էին, հապա ինչպե՞ս էին նրանք օգտագործվել երկու տարի, ինչպես վկայում են մեր պատմագիրները:

Հայոց լեզվում բաղաձայնները եռաստիճան են (թ, պ, փ, ձ, ծ, ց ևն.): Եթե յուրաքանչյուր խմբից մեկ տառը լինի՝ հնարավոր է մի կերպ բավարարվել: Ասենք, միայն Ց տառը կարող է փոխարինել թե՛ 2-ին և թե՛ 3-ին: Այժմ էլ շատ հայեր կան, որոնք մայրենի լեզվով կրթություն չեն ստացել և հայերեն նամակներ են գրում օտար տառերով: Անհավանական չէ, որ Ռանիելյան նշանագրերով (որ մեր հաստատ համոզմամբ հայերեն չեն եղել, այլ եբրայերեն) հնարավոր է եղել հայերեն տեքստեր գրել:

Այս նշանագրերով Մաշտոցը սովորեցրել է իր աշակերտներին երկու տարի, սրանք օգտագործել է իր հայերեն այբուբենն ստեղծելիս, հարկավ օգտագործել է նաև հունական այբուբենը. հատկապես վերջինիս գրության կարգն է վերցրել (ձախից աջ) և ձայնավորների կանոնավորությունը: Տառաձևերը, ինչպես տեսանք, մեծ մասամբ հրեական են<sup>4</sup>, սակայն Մետրոպը կարողացել է Ռանիելյան գիրը հայացնել և նրանից ծնեցնել նոր, զուտ հայկական գրեր, որ ոչ մի լեզվում չկա:

Եբրայերեն լեզվի ազդեցությունը հայերենի վրա եղել է ոչ միայն բառերի մուտքով, այլև մշակութային ծանապարհով. հայերը վաղուց (տակավին քրիստոնեության տարածումից առաջ) ծանոթ են եղել հրեաներին և նրանց մշակույթին, իսկ երբ ստեղծեցին իրենց դպրոցությունը՝ առաջին գիրքը, որ շարադրել են հայերեն տառերով՝ եղել է Աստվածաշունչը:

**К. Дургарян—О еврейских заимствованиях в армянском языке.**—Армянский язык в процессе формирования вступил в общение с многими древними языками и сохранил в своем словарном фонде следы всех этих живых и мертвых языков. Изучение этих языковых реликтов важно не только с точки зрения истории развития армянского языка, но и в аспекте истории культуры вообще, для выяснения связей и взаимовлияний древних народов и племен.

В статье показывается, что влияние древнееврейского на армянский не ограничивалось лексическими заимствованиями. Армяне задолго до принятия христианства были хорошо знакомы с евреями, перенимали реалии их культуры.

<sup>4</sup> Հայոց գրերի նմանությունը եբրայերենի հետ մանրամասնորեն քննված է մեր «Հայոց գրերի ծագման շուրջը» հոդվածում, որ տպագրված է ՀՄՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագրում, 1962 թ., № 5: